ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# Ք Ա Ր Ա Շ Ա Մ Բ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

## ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ

*Համայնքի ղեկավար* – Չ. ԽԼՂԱԹՅԱՆ

*Ներկայացման ձևաչափը* – համայնքի ժողով

*Իրականացման վայրը* - համայնքային կենտրոն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՔԱՐԱՇԱՄԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

2416,ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ,գ.Քարաշամբ Հեռ.(0-224)- - - - - - - - - - - - - -

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

## Քարաշամբ համայնքի ընդհանուր ժողովի

05 օգոստոսի 2009թ.

2009թ. օգոստոսի 5-ին կայացավ Քարաշամբի գյուղական համայնքի ընդհանուր ժողով: ժողովին մասնակցում էին համայնքի շուրջ 85 բնակիչ:Նախագահում էր Մ. Խլղաթյանը, քարտուղարում էր Է. Ավետիսյանը:

ԼՍԵՑԻՆ- Համայնքի ղեկավար Զ. Խլղաթյանի վերջին մեկ տարվա գործունեության հաշվետվության մասին:

Հաշվետու տարվա ընթացքում քառամյա ծրագրին և գյուղապետարանի բյուջեին համապատասխան, կատարվել են ներքոհիշյալ աշխատանքները.

-Ոռոգման ջրագծի վերանորոգում, փոխվել է 150մմ 157.7մ խողովակ՝ 750.0 հազար դրամ արժողությամբ:
-ճանապարհների վերանորոգում, լցվել է խճաքար, ջրահեռացման, կիսախողովակների վերանորոգման աշխատանքներ՝ 400.0 հազար դրամ:
-Նոր թաղամասի ճանապարհների վերանորոգում, խճալցում՝ 950.0 հազար դրամ:
-Օգնության կարգով դպրոցին են տրվել 50 հատ ալբոմ՝ 246.5 դրամ:
-Բնակչությանը տրվել է օգնություն գյուղապետարանի օգնության ֆոնդից 1290.0 հազար դրամ.

1. ուսուցիչների օրվա առթիվ
2. «Սուրբ Գևորգ» եկեղեցու միջոցառման համար
3. Դպրոցականներին էքսկուրսի կազմակերպելու համար
4. «Ոսկե Աշուն» միջոցառմանը
5. Առաջին դասարանցիներին նվերներ
6. Շրջանավարտներին նվերներ
7. Ամանորյա տոնակատարություններ
8. Կանանց միջազգային օրվա առթիվ
9. Անկախության օրվա առթիվ
10. Մայիսյան տոների առթիվ
11. Բնակիչների դրամական օգնություն՝ իրենց դիմումների համաձայն

Իմ հետևողական աշխատանքի արդյունքում հասել եմ նրան, որ.

-Շուտով «Հայջրմուղկոյուղի»ՓԲԸ-ի կողմից Ասիական Զարգացման Բանկի միջոցով կսկսվեն ջրագծի սերքին ցանցի և ջրամբարի կառուցման աշխատանքները:

-Արդեն սկսվել են Քարաշամբի հնագիտական տարածքների պեղումները /դամբարանաշերտ/, աշխատում են շուրջ 30 քարաշամբցիներ:

-IV եռամսյակում կսկսվեն դպրոցի վերանորոգման աշխատանքները:

-Շարունակվում են մշակույթի տան վերանորոգման աշխատանքները, կավարտվեն 2009թ. դեկտեմբերին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ—Մ. Խլղաթյան, Հ. Ավետիսյան, Բ. Եղիազարյան, Կ. Մարգարյան, Տ. Դանիելյան, Ջ. Գրիգորյան, Հ. Օսիպյան,

ՈՐՈՇԵՑԻՆ-Համայնքի ղեկավարի աշխատանքները գնահատել բավարար և առաջարկեցին շարունակել իր գործունեությունը նույն հետևողականությամբ և բարեխղճությամբ:

Նախագահ՝ Մ. Խլղաթյան

Քարտուղար՝ Է. Ավետիսյան